ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

МАРЕТА АРШАКЯН

ПРОЕКТИРОВАНИЕ И РАЗРАБОТКА ВЕБ-САЙТА СИСТЕМЫ ХРАНЕНИЯ МАТЕРИАЛЬНЫХ ЗАПАСОВ

Ключевые слова: *склад, запас, логистика, интегрированная логистика, информационная логистика, программирование, веб-сервер, веб-сайт, языки программирования, PHP*

С развитием логистики, на основе использования современных информационных технологий. и совершенных программных продуктов осуществляется оптимальное управление запасами. На веб-серверах проектируются веб-сайты для автоматизации логистических систем. В статье описаны локальные серверные платформы ***Denwer, XAMPP*** *и* ***Open Server****. На сервере Denwer построен веб-сайт* ***http://localhost/warehouse/calculate.php,*** *где осуществляется управление склада в режиме онлайн. Программные коды написаны на языках программирования* ***HTML и PHP.***

MARETA ARSHAKYAN

WEB SITE DESIGN AND LAYOUT OF THE MATERIAL INVENTORY STORAGE SYSTEM

Key words: *warehouse, stock, logistics, integrated logistics, information logistics, programming, Web server, Web site, programming languages, PHP*

Logistics and logistics considerations, inventory logistics, storage logistics and information logistics are studied in order to optimize the material stock management process. Modern information technologies are widely used in logistics. Optimized resource management is provided through improved software products in a logistic chain. The article describes the local server platforms ***Denwer, XAMPP, and Open Server****, a Web site built in Denver,* ***http://localhost/warehouse/calculate.php*** *where online storage is maintained. Program codes are written in* ***HTML and PHP*** *programming languages.*

ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *բարձրագույն ուսումնական հաստատություն, ռիսկ, ռիսկերի կառավարման համակարգ, ռիսկերի կառավարման գործընթաց*

Հոդվածում ներկայացվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական և գիտահետազոտական աշխատանքների հիմնական ռիսկերը, այնուհետև առաջա-

դրվում է ռիսկերի կառավարման համակարգ, որը նախատեսվում է կիրառել բուհերում՝ այդկերպ նպաստելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման համակարգի մասին խոսելիս, առաջին հերթին, հարկավոր է ուսումնասիրել այն միջավայրը, որտեղ պետք է կիրառվի դիտարկվողհամակարգը:

Միջավայրի ուսումնասիրությունը պահանջում է բացահայտել վերջինիս գործառույթները, որպեսզի ամբողջական և լիարժեք ներկայացվեն դիտարկվող օբյեկտի էությունը և դրանից բխող առանձնահատկությունները: Ցանկացած ոլորտի գործառույթներն ուղղված են տվյալ ոլորտի վերջնարդյունքների ձևավորմանը: Բարձրագույն ուսումնական հաստատության վերջնարդյունքն արտահայտվում է թողարկվող բակալավրների և մագիստրոսների գիտելիքներով՝ շուկայի պահանջներին դրանց համապատասխանելիությամբ:

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը կրթական հաստատությունն է, որն իրականացնում է բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրեր:

Բարձրագույն ուսումնական հաստատության գործընթացի հիմնական բաղադրիչներն են կրթական և գիտահետազոտական աշխատանքները:

Կրթական գործընթացը ներառում է կրթական ծրագրերի կազմման, իրականացման, գնահատման, վերահսկողական և կարգավորման գործառույթներ:

Կրթական գործընթացը սկսվում է ըստ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին» ՀՀ օրենքի և նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափորոշիչների կրթական ծրագրերի կազմումից:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները, առաջնորդվելով նորմատիվ իրավական ակտերով, սակայն իրենց կրթական ծրագրերը չհամապատասխանացնելով շուկայի պահանջներին, կարող են ժամանակավրեպ դարձնել իրենց շրջանավարտների մասնագիտական գիտելիքը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների հաջորդ կարևոր բաղադրիչը գիտահետազոտական աշխատանքներն են: Շատ դեպքերում գիտահետազոտական աշխատանքներն իրենց գիտական արժեքով ուղղված չեն շուկայի պահանջների բավարարմանը, այսինքն՝ կրում են ինքնանպատակ բնույթ:

Սույն հոդվածում ընդհանուր դրույթներով ներկայացվող ռիսկերի կառավարման համակարգը և դրա ներքո իրականացվող գործընթացներն ուղղված են բարձրագույն ուսումնական հաստատության կրթական և գիտահետազոտական աշխատանքների մակարդակի վրա ազդող գործոնների բացասական դրսևորումների՝ ռիսկերի բացահայտմանը և դրանց կառավարման հիմնախնդիրներին:

Ռիսկերի կառավարման համակարգը և դրա գործընթացները դիտարկելուց առաջ հարկավոր է ներկայացնել «ռիսկ» հասկացությունը:

Համաձայն **ISO 31000:2900** «Ռիսկերի կառավարման սկզբունքներ և ուղեցույցներ» միջազգային ստանդարտի 2.1 ենթակետի՝ ռիսկը բնութագրվում է հետևյալ կերպ. անորոշության ազդեցություն նպատակի վրա:

Անորոշությունը մի իրավիճակ է, երբ կա տեղեկատվության անբավարարություն (նույնիսկ մասնակի), որով պայմանավորված են իրադարձությունների կամ դրանց մասին գիտելիքների կամ դրանց հավանական հետևանքների մասին ոչ ամբողջական պատկերացումները:

Ազդեցությունը նշանակում է շեղում կանխատեսվածից:

Այժմ ներկայացնենք ռիսկերի կառավարման գործընթացը, որը կօգնի բարձրագույն ուսումնական հաստատությանը հասնել իր նպատակներին և խելամտության սահմաններում խուսափել անակնկալներից ու սխալ գնահատումներից[1]:

Ռիսկերի կառավարումը ներկայացնում է.

- ողջ բարձրագույն ուսումնական հաստատությունն ընդգրկող անընդհատ գործընթաց,
- իրականացվում է բոլոր մակարդակներում և ամբողջ անձնակազմի կողմից,
- կիրառվում է ռազմավարության ձևավորման և մշակման գործընթացում,
- ներառում է բարձրագույն ուսումնական հաստատության ռիսկերի փաթեթի վերլուծություն,
- նպատակ ունի կանխորոշելու բացասական գործոնները, որոնք կարող են անդրադառնալ բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության վրա,
- նպատակների իրականացման խելամիտ երաշխիքներ է տալիս:

Ռիսկերի կառավարումը ներառում է՝

1. Ռիսկերի արձանագրում և դրանց ընդունելի մակարդակի սահմանում:
2. Ծագող ռիսկերի արձագանքմանը վերաբերող որոշումների ընդունման մեխանիզմների կատարելագործում:
3. Անկանխատեսելի հանգամանքների և վնասների նվազեցում:
4. Ռիսկերի ընդհանրության բացահայտում և կառավարում:
5. Բարենպաստ հնարավորությունների օգտագործում:
6. Ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

Ռիսկերի կառավարման արդյունքում ստացված տեղեկատվությունը կառավարման մարմիններին հնարավորություն է տալիս արդյունավետ գնահատելու իրենց կողմից տնօրինվող հնարավորությունները և դրանք արդյունավետ բաշխելու համապատասխան ոլորտների վրա: Օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատության հնարավորությունների շարքը կարելի է դասել պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ մարդկային ռեսուրսները և գիտական միտքը: Վերոհիշյալ հնարավորությունների վերջնարդյունքները ռիսկերի կառավարման ոչ համակարգված մոտեցման արդյունքումկարող են կորցնել իրենց արդիականությունը, այսինքն՝ ուղված չլինեն շուկայի պահանջների բավարարմանը:

[1]Վ. Բաբայան, Բանկային ռիսկերի կառավարում, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2014, էջ 23:

Այժմ ներկայացնենք բարձրագույն ուսումնական հաստատություններիռիսկերի կառավարման համակարգի մեր տեսլականը:

Գծապատկեր 1. ***Բուհի ռիսկերի կառավարման համակարգ***

Ռիսկերի կառավարման համակարգը ներկայացվում է ութ բաղադրիչի միջոցով, որոնք գծապատկեր 1-ում արտացոլվում են հորիզոնական տողերով, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպչական կառուցվածքի մասնակիցները և օժանդակող անձինք՝ ուսանողները՝ ուղղահայաց տողերով: Գծապատկերը ցույց է տալիս ոչ միայն նպատակների, ռիսկերի կառավարման և ուսումնական հաստատության առանձին մասերի փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս ռիսկերը և դրանց ազդեցությունը դիտարկելու բոլոր մակարդակներում:

Բարձրագույն ուսումնական հաստատության նպատակները կարելի է բաժանել չորս հիմնական մակարդակների[1]՝

- ռազմավարական նպատակներ – բարձրագույն ուսումնական հաստատության առաքելությունից և տեսլականից բխող բարձր մակարդակի նպատակներ,
- գործառնական նպատակ – ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- հաշվետվություններ իձևավորման նպատակներ – արժանահավատ հաշվետվությունների կազմում,
- համապատասխանելիության նպատակ – գործող օրենսդրական և նորմատիվային ակտերի պահանջների ամբողջական կատարման ապահովում:

Համաձայն միջազգային նորմերի՝ ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- **<u>Ներքին միջավայր</u>**

Ներքին միջավայրը ներկայացնում է բարձրագույն ուսումնական հաստատության կրթական և գիտահետազոտական գործընթացների իրականացման վայր, որտեղ ձևա-

[1] Վ. Բաբայան, Բանկային ռիսկերի կառավարում, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2014, էջ 24:

վորվում են հաստատության բնորոշ ռիսկերը և դրանց կառավարման ռազմավարությունը:

Նշված միջավայրի ձևավորման գործում կարևորվում է բարձրագույն ուսումնական հաստատության ռիսկերի կառավարման փիլիսոփայությունը, կառավարման մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը, էթիկական արժեքները, ավանդույթները և մասնագիտական ունակությունները:

- **Նպատակների սահմանում**

Ընդհանուր նպատակները դրվում են ռազմավարական մակարդակով, որը պետք է բխի բարձրագույն ուսումնական հաստատության առաքելությունից: Նպատակները պետք է համապատասխանենբարձրագույն ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված ռիսկի ընդունելի մակարդակին:

- **Իրադարձությունների բնորոշում**

Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինները բացահայտում են կրթական և գիտահետազոտական գործընթացները և դրանց արդյունքում ձևավորված իրադարձությունները (դրական և բացասական ազդեցություններ), որոնք կարող են ազդել հաստատության, դրա նպատակների ու ռազմավարության իրականացման վրա:

Իրադարձության ազդեցության բնույթը որոշելիս կառավարման մարմինները հաշվի են առնում արտաքին ու ներքին բազմաթիվ ազդակների (գործոնների) բազմազանությունը, որոնք կարող են ողջ հաստատության համար հանգեցնել ռիսկերի կամ հնարավորությունների:

- **Ռիսկերի գնահատում**

Ռիսկերի գնահատումը բարձրագույն ուսումնական հաստատությանը հնարավորություն է տալիս հասկանալու, թե որքանով կարող են ազդել հնարավոր իրադարձությունները նպատակների իրականացման վրա:

- **Արձագանք ռիսկերին**

Համապատասխան ռիսկի գնահատմամբ հաստատությունը որոշում է իր արձագանքման քայլերը:

Արձագանքը կարող է ներառել ռիսկից խուսափելու մոտեցում, ռիսկի կրճատում (նվազեցում), ռիսկի վերաբաշխում, նվազեցում:

- **Հսկողության միջոցներ**

Հսկողության միջոցները ներկայացնում են քաղաքականությունների ու ընթացակարգերի (ներքին իրավական ակտերի) համախումբ, որոնք ուղղված են կրթական և գիտահետազոտական գործընթացների վրա ազդող գործոնների բացասական հետևանքների՝ ռիսկերի կառավարմանը:

- **Տեղեկատվական և հաղորդակցման ուղիներ**

Անհրաժեշտ տեղեկատվությունը որոշվում, արձանագրվում և փոխանցվում է այն ձևով ու ժամկետում, որը հնարավորություն է տալիս օգտագործողին իրականացնելու իր պարտականությունները:

- **Մոնիթորինգ (մշտադիտարկում)**

Բարձրագույն ուսումնական հաստատության ռիսկերի կառավարման մոնիթորինգը ներկայացնում է ռիսկերի կառավարման բաղադրիչների առկայության ու գործունեության գնահատում՝ որոշակի ժամանակային միջակայքում:

Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարմանմարմինները, ֆունկցիոնալստորաբաժանումներըևայլմասնակիցներն են.

1. հոգեբարձումներիխորհուրդ,
2. ռեկտորատ,
3. գիտխորհուրդ,
4. ֆունկցիոնալստորաբաժանումներ, այդթվում՝դեկանատներ,
5. ամբիոններ, այդթվում՝պրոֆեսորադասախոսականանձնակազմ,
6. ուսանողներ:

Ռիսկերի կառավարման համակարգը և դրա ներքո իրականացվող գործընթացները հնարավորություն են տալիս հասնելու կառավարման նախանշված նպատակներին՝ խուսափելով անցանկալի երևույթներից և բարձրացնելով կառավարչական որոշումների արդյունավետությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության ապահովման գործում կարևորվում է կառավարչական ճշգրիտ որոշումների կայացումը, իսկ դրանում իրենց կարևոր դերակատարումն ունեն այդ հաստատության բնորոշ ռիսկերի (բարի համբավի, կոռուպցիոն, գիտական աշխատանքների որակի, փոխանցվող գիտելիքի և շուկայի պահանջների միջև առկաանհամապատասխանելիությունը) բացահայտումը և դրանց արդյունավետկառավարումը:

Ներկայացվածի հետ մեկտեղ, ռիսկերի կառավարումը կարող է տալ հետևյալ հարցադրման հիմնապատճառների լուծման ուղիները՝ ինչո՞ւ է շուկայի կողմից կադրերի հավաքագրման գործընթացում նախապատվությունը տրվում արտերկրյա հովանու ներքո գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից թողարկված բակալավրներին և մագիստրոսներին:

Սույն հոդվածի հիմնադրույթներն ավելի հանգամանալից կներկայացվեն առանձին հոդվածաշարի տեսքով:

ВАГАН БАБАЯН

СУТЬ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ РИСКАМИ ВЫСШЕГО УЧЕБНОГО ЗАВЕДЕНИЯ

Ключевые слова: *высшее учебное заведение, риск, система управления рисками, процесс управления рисками*

В статье представлены основные риски образовательной и исследовательской деятельности высших учебных заведений, а затем продвигается система управления рисками, которая предназначена для использования в высших учебных заведениях, способствуя повышению эффективности их деятельности.

VAHAN BABAYAN

THE ESSENCE OF THE RISK MANAGEMENT SYSTEM OF THE HIGHER EDUCATION INSTITUTION

Key words: *higher education institution, risk, risk management system, risk management process*

The main risks of educational and research activity of higher education institutions are presented in the article, and then the risk management system is advanced, which is intended for use in higher educational institutions, contributing to the increase of their activity efficiency.

ԱՐԱՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ
ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրերի համակարգող, տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հիմնաբառեր. *պետական կառավարում, տեղական ինքնակառավարում, ապակենտրոնացում, անհամամասնություն, անհամաչափություն,լիազորություններ, համայնքների խոշորացում*

Հայաստանում տեղական ինքնակառավարումը նախորդ երկու տասնամյակներում ունեցել է և՛ ձեռքբերումներ, և՛ ձախողումներ, ինչը փորձի պակասի և ոչ ճիշտ մոտեցումների արդյունք է: Այժմ ոլորտում նոր շրջադարձային մոտեցումներ են դրսևորվում համայնքների խոշորացման ճանապարհով, ինչը լրջագույն և համակողմանի ուսումնասիրության կարիք ունի:

Սույն հոդվածում քննարկվել և ներկայացվել են տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող միջոցառումները և առկա հիմնախնդիրները:

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում քսանամյա պատմություն ունի, որի ընթացքում եղել են և՛ ձեռքբերումներ, և՛ ձախողումներ: Ձախողումներն առաջին հերթին պայմանավորված են եղել փորձի պակասով, ինչպես նաև շատ հարցերում դրսի փորձի տեղայնացման ոչ ճիշտ մոտեցումներով՝ առանց հաշվի առնելու մեր երկրի բնակլիմայական, տարածքային, ռելիեֆային, տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, մշակութային, կրոնական, իրավական դաշտի և այլ առանձնահատկությունները: Ամբողջու-